ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27 հուլիսի 2016թվականի N 10-Ա

ՍԼԱՎԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ,161րդ,163-րդ, 164-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի Օգոստոսի 11-ի N1384-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Սլավիկ Հայրապետյանի 2016թվականի հուլիսի 26-ի դիմումը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի «Կրթություն և Մշակույթ» միացյալ տնօրինության տնօրեն Սլավիկ Հայրապետյանին տրամադրել 2016 թվականի ամենամյա արձակուրդ 2016թ. օգոստոսի 1-ից՝ 24 աշխատանքային օր տևողությամբ (20 նվազագույն, 4 լրացուցիչ):
2.Աշխատանքի մեջ համարել 2016թվականի սեպտեմբերի 2-ից:
3.Տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել՝ «Կրթություն և Մշակույթ» միացյալ տնօրինության գրադարանի վարիչ Գոհարիկ Գրիգորյանին:
4.Գլխավոր հաշվապահին (Զարուհի Թորոսյան) օրենքով սահմանված կարգով կատարել վճարում:
5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2016թ. հուլիսի 27
գ.Աղավնատուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հուլիսի 2016թվականի N 11-Ա

ԱՂԱՎՆԱՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Սահմանել Աղավնատան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը և նրա գործառույթները՝ համաձայն **հավելվածի**:
2. Ձևավորել համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողով հետևյալ կազմով՝
1) Վալերի Խաչիկի Զոհրաբյան՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար- հանձնաժողովի նախագահ.
2) Զարուհի Ռոբենի Թորոսյան՝ համայնքապետարանի գլխավոր մասնագետ- հանձնաժողովի քարտուղար
3) Մարգարիտ Հայկի Գևորգյան՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ- հանձնաժողովի անդամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2016թ. հուլիսի 01
գ.Աղավնատուն

Հավելված

ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի

ղեկավարի 2016 թվականի

հուլիսի 1-ի N 11-Ա որոշման

ԱՂԱՎՆԱՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է Աղավնատան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձաժողով) ձևավորման, գործունեության կարգը և նրա գործառույթները:
2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կանոնակարգով, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և այլ իրավական ակտերով:
3. Հանձնաժողովը բաղկացած է Աղավնատան համայնքապետարանի աշխատակազմի 3 անդամից: Հանձնաժողովը ձևավորում և դրա անդամներին նշանակում է Աղավնատան համայնքի ղեկավարը:
4. Հանձնաժողովի որոշումները հիմք են Աղավնատան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի նկատմամբ «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կարգապահական տույժ նշանակելու գործընթաց սկսելու համար:
5. Հանձնաժողովի գործունեության մասին տվյալները տեղադրվում են Աղավնատուն համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ www.axavnatun.am:
6. Հանձնաժողովի աշխատանքների նյութատեխնիկական և կազմակերպչական օժանդակությունն իրականացնում է Աղավնատան համայնքապետարանի աշխատակազմը:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Հանձնաժողովի հիմնական խնդիրն է՝ նպաստել Աղավնատան համայնքապետարանում էթիկայի կանոնների պահպանմանը:
8. Հանձնաժողովի նպատակն է ապահովել համայնքային ծառայողի պատշաճ վարքագիծը, բացառել հանրային և մասնավոր շահերի բախումը, ամրապնդել հասարակության վստահությունը:
9. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում՝
1) քննության է առնում իրեն ուղղված հարցերը.
2) քննարկվող հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ կամ տալիս եզրակացություններ.

3)իր գործունեության վերաբերյալ յուրաքանչյուր տարի գրավոր հաշվետվություն է ներկայացնում համայնքի ղեկավարին.
4)իրականացնում է սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

10.Հանձնաժողովի քննարկմանը կարող են ներկայացվել Աղավնատան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի կանոնների խախտման, դրանց պահպանման, պահպանմանը խոչընդոտելու վերաբերյալ հարցեր:
11. Սույն աշխատակարգի 10-րդ կետով նախատեսված հարցերը չպետք է առնչվեն քրեական, վարչական պատասխանատվություն առաջացնող հարցերին:
12. Հանձնաժողովի քննարկմանը հարցեր իրավասու են ներկայացնել՝
1) Աղավնատուն համայնքի ղեկավարը,
2) Աղավնատուն համայնքի ավագանու անդամները,
3) Աղավնատան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողները,
4) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:
13.Հանձնաժողովի քննարկմանը հարցերը ներկայացվում են գրավոր՝ համապատասխան հիմնավորումներով:
14.Հանձնաժողովը հարցերը քննարկում է դրանք ստանալուց հետո 15-օրյա ժամկետում: Անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովը հարցի քննարկումը՝ Հանձնաժողովի նախագահի որոշմամբ կարող է երկարաձգել, բայց ոչ ավելի, քան մեկ շաբաթ ժամկետով:
15. Աղավնատան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողները կարող են դիմել Հանձնաժողովին՝ պարզաբանումներ ստանալու էթիկայի կանոնների պահպանման վերաբերյալ: Հանձնաժողովը այդ դիմումներին պատասխանում է սույն աշխատակարգի 14-րդ կետում նշված ժամկետում:
16.Եթե Հանձնաժողովը սահմանված ժամկետում չի տալիս համապատասխան եզրակացություն կամ պարզաբանում, ապա Աղավնատուն համայնքի ղեկավարը այն կարող է լուծարել և մեկամսյա ժամկետում ձևավորել նոր Հանձնաժողով, որն իր աշխատանքը սկսում է անպատասխան դիմումի քննարկումից: Այդ դեպքում սույն աշխատակարգի 14-րդ կետով սահմանված ժամկետները վերսկսվում են նոր Հանձնաժողովը ձևավորելու պահից:
17.Հանձաժողովի նիստերին մասնակցելու են հրավիրվում հարցը ներկայացրած անձը և այն անձը, ում հետ կապված է ներկայացված հարցի քննությունը:
18.Հանձնաժողովը հարցերի քննարկմանը կարող է ներգրավվել նաև շահագրգիռ անձանց, մասնագետների և այլոց:
19.Հանձնաժողովի նիստին սույն աշխատակարգի 17-րդ և 18-րդ կետերում նշված անձանց չներկայանալը արգելք չէ Հանձնաժողովի կողմից տվյալ հարցի քննության և համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունման համար:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

20. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:
21. Հանձնաժողովի նիստերը գումարվում են համապատասխան դիմումի հիման վրա:
22.Հանձնաժողովը եռօրյա ժամկետում վերադարձնում է դիմումը, եթե այն ներկայացվել է սույն կարգով կամ այլ իրավական ակտերով չնախատեսված հարցերի վերաբերյալ:
23.Հանձնաժողովի նիստերը իրավազոր են՝ Հանձնաժողովի առնվազն կեսից ավելի անդամների

մասնակցության դեպքում:
24.Հանձնաժողովի նախագահը դիմումը ստանալուց երեք օրվա ընթացքում առաջարկում է այն անձին՝ ում վերաբերյալ դիմում է ներկայացվել էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ՝ տալ համապատասխան բացատրություններ և պարզաբանումներ:
25.Հանձնաժողովը դիմում ներկայացրած անձին կարող է առաջարկել ներկայացնել անհրաժեշտ բացատրություններ, փաստաթղթեր և այլ հիմքեր, որոնք հնարավորություն կտան պարզել էթիկայի կանոնների խախտման առկայությունը կամ բացակայությունը:
26.Սույն կարգի 25-րդ կետում նշված փաստաթղթերը կամ պարզաբանում չներկայացնելը կարող է Հանձնաժողովի կողմից մեկնաբանվել, որպես էթիկայի կանոնների խախտման բացակայություն:
27.Հանձնաժողովի կազմից համայնքի ղեկավարը նշանակում է Հանձնաժողովի նախագահ և քարտուղար:
28. Հանձնաժողովի նախագահը՝
1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.
2) վարում է հանձնաժողովի նիստերը.
3) հաստատում է հանձնաժողովի նիստի օրակարգը, որոշում նիստի անցկացման ժամանակը և վայրը.
4) որոշում է հանձնաժողով ներկայացրած հարցերի քննարկման հերթականությունը.
5) ստորագրում է հանձնաժողովի անունից կազմվող գրությունները.
6) Հանձնաժողովի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում.
7)իրականացնում է սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:
29. Հանձնաժողովի քարտուղարը՝
1)ապահովում է հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգերի, անհրաժեշտ այլ նյութերի, ինչպես նաև եզրակացությունների և որոշումների նախագծերի պատրաստումը.
2)Հանձնաժողովի անդամներին, այն անձին, ում ներկայացմամբ քննարկվում է հարցը և ում հետ կապված է հարցի քննությունը, նիստից 2 օր առաջ տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրակարգի, ժամանակի և վայրի մասին.
3) արձանագրում է հանձնաժողովի նիստերը և ստորագրում արձանագրությունները.
4) կատարում է հանձնաժողովի նախագահի հանձնարարականները.
5)իրականացնում է սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:
30. Հանձնաժողովի անդամը՝
1) Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ կատարում է վերջինիս լիազորությունները.
2) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին.
3) առաջարկություն է ներկայացնում Հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ.
4) ստորագրում է Հանձնաժողովի ընդունած որոշումները և եզրակացությունները,
5)կատարում է հանձնաժողովի նախագահի հանձնարարականները,
6)իրականացնում է սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:
31. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են համայնքի ղեկավարի որոշմամբ՝
1) անձնական դիմումի հիման վրա.
2) առնվազն երեք անգամ հանձնաժողովի նիստերին անհարգելի բացակայելու դեպքում.
3) էթիկայի կանոնները խախտելու դեպքում.

4) սույն աշխատակարգով սահմանված պարտականությունները խախտելու դեպքում.
5)Աղավնատան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայող այլևս չհանդիսանալու դեպքում:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

32.Հանձնաժողովը ընդունում է որոշում էթիկայի կանոնների խախտման կամ բացակայության մասին:
33.Էթիկայի կանոնների պահպանման մասով համայնքային ծառայողի կողմից անհրաժեշտ վարքագիծ դրսևորելու համար Հանձնաժողովը տրամադրում է եզրակացություններ:
34.Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները ստորագրվում են Հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամների կողմից:
35.Հանձնաժողովի եզրակացությունները և որոշումները ընդունվում են քվեարկությամբ՝ Հանձաժողովի նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Քվեարկությանը մասնակցում եմ Հանձնաժողովի բոլոր ներկա անդամները՝ քվեարկելով կողմ կամ դեմ:
36.Հանձնաժողովի որոշումները, դրանք ընդունելուց հետո, հաջորդ աշխատանքային օրը տրամադրվում են այն անձին, ում ներկայացմամբ քննարկվել է հարցը և ում հետ կապված է հարցի քննությունը, ինչպես նաև տվյալ համայնքային ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:
37.Հանձաժողովը որոշման մեջ կարող է խորհրդակցական կարգով առաջարկել, թե ինչ կարգապահական տույժ նշանակվի տվյալ անձի նկատմամբ:
38.Հանձնաժողովի եզրակացությունները պարտադիր են Աղավնատան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների համար:
39.Հանձնաժողովի եզրակացությունների հասանելիությունը Աղավնատան համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներին՝ ապահովում է Աղավնատան համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Աշխատակազմի քարտուղար Վ.Զոհրաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հուլիսի 2016թվականի N 12-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ և ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի բնակիչ Բագրատ Գերասիմի Նահապետյանը (ծնված 02.01.1960թ.), դիմել է գ.Աղավնատուն Ս.Վիրաբյան փող 22 հասցեում գտնվող իրեն պատկանող (ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 18.02.1991 թ. թիվ 3 որոշման և 29.06.2016թ ըստ իրենց ժառանգության իրավունքի վկայագրերի՝ ս/մ 2744) 0.12 հա օրինական հողամասին կից ավել օգրագործվող 0.0147 հա օրինական հողամասի և ավել օգտագործվող հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունների նկատմաբ իրավունքի վերականգնելու խնդրանքվ:
Հաշվի առնելով, որ բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի, Աղավնատան համայնքի Ս.Վիրաբյան փողոց թիվ 22 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամաբ քաղաքացի Բագրատ Գերասիմի Նահապետյանի (ծնված 02.01.1960թ.), գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.12 հա օրինական հողամասին կից ավել օգրագործվող 0.0147 հա օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների (բնակելի տուն 213,6քմ.՝ կառուցված 1934թ.-1980թ, թոնրատուն 16.1քմ. կառուցված 1960թ., անասնաշենք 14.7քմ. կառուցված 1980թ.) նկատմամաբ:

Բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<ՀՀ համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսնված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենքի-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որոկավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Բագրատ Գերասիմի Նահապետյանի (ծնված 02.01.1960թ.), սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.04-006-0044-0009 ծածկագրին տալ Ս.Վիրաբյան փողոց թիվ 22 հասցեն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2016 թ. հուլիսի 08
գ.Աղավնատուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2016թվականի N 13-Ա

Հանձնաժողով ստեղծելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնկառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրեքի 32-րդ հոդվածի 17-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի Մարզի Աղավնատուն համայնքում 2016թ-ի հուլիսի 10-ին կարկտահարության հետևանքով գյուղացիական տնտեսություններին պատճառված վնասների չափերն ուսումնասիրելու և արձանագրելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի

2.Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Արմավիրի ԳԱՄԿ>> ՓԲԸ մասնագետ Ա. Վարդանյանին և <<Խոյ>> ՋՕԸ աշխատակից Գ.Գրիգորյանին

3.Հանձնաժողովին (Վ. Զոհրաբյան) սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել եռօրյա ժամկետում և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Գ. Մաթևոսյան

2016թ. հուլիսի 11
գ. Աղավնատուն

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի
ղեկավարի 2016թ. հուլիսի 11-ի N 13-Ա Որոշման

Կարկտահարության հետևանքով գյուղացիական տնտեսություններին պատճառված վնասների չափերն ուսումնասիրելու և արձանագրելու հանձնաժողով.

1.Հանձնաժողովի նախագահ -	Վ.Զոհրաբյան	համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
2. հանձնաժողովի անդամ-	Վ. Նիկողոսյան	համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
3. հանձնաժողովի անդամ -	Մ.Հարությունյան	համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ
4. հանձնաժողովի անդամ -	Գ. Գրիգորյան	համայնքի ավագանու անդամ
5. հանձնաժողովի անդամ -	Ս. Սումբատյան	համայնքի ավագանու անդամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2016թվականի N 14-Ա

ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2016 թվականի հունիսի 23-ի թիվ 86 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.2016 թվականի սեկտեմբերի 18-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ավագանու ընտրություններին Աղավնատուն համայնքի տարածքում տեղամասային կենտրոններ կազմավորել՝

1)Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի Մշակույթի տան շենքը /հասցեն Ն.Մաթևոսյան պող. N 18, թիվ 1 տեղամաս /:

Տարածքը տիրապետող նշամակել մշակույթի տան տնօրեն՝ Սլավիկ Օրջոնի Հայրապետյանին /հեռ 094.359733/

2)Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատան Ղ.Աբգարյանի անվան միջնակարգ դպրոցի շենքը /հասցեն Շահումյան փող. N 1, թիվ 2 տեղամաս/:

Տարածքը տիրապետող նշամակել դպրոցի տնօրեն՝ Արմենակ Երվանդի Ավետիսյանին /հեռ. 093. 195868/:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել լիազոր մարմնին, թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և տարածքի տիրապետողին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2016 թ. հուլիսի 25
գ.Աղավնատուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հուլիսի 2016թվականի N 15-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ և ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի բնակիչ Յուրիկ Հայկի Նիկողոսյանը (ծնված 07.08.1958թ.), դիմել գ.Աղավնատուն Շահումյան փող N-14 հասցեում գտնվող իրենց պատկանող (ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 18.02.1991 թ. թիվ 3 որոշման) 0.10 հա օրինական հողամասին կից ավել օգրագործվող 0.0147 հա օրինական հողամասի և ավել օգտագործվող հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունների նկատմաբ իրավունքի վերականգնելու խնդրանքվ:
Հաշվի առնելով, որ բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի, Աղավնատան համայնքի Շահումյան փողոց N-14 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամաբ քաղաքացի Յուրիկ Հայկի Նիկողոսյանի (ծնված 07.08.1958թ.), գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.10 հա օրինական հողամասին կից ավել օգրագործվող 0.0147 հա օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների (բնակելի տուն 60.9 քմ.՝ կառուցված 1960թ , ծածկոց 21.8քմ. կառուցված 1990թ., պարիսպ 14.1քմ. կառուցված 1990թ.) նկատմամաբ:

Բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<ՀՀ համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսնված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենքի-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որոկավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Յուրիկ Հայկի Նիկողոսյանի (ծնված 07.08.1958թ.), սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.04-006-0068-0007 ծածկագրին տալ Շահումյան փողոց թիվ 14 հասցեն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2016թ. հուլիսի 26
գ.Աղավնատուն